



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№՝ 1021-Ա/Ք

« 17 » 10. 2014թ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
5-25.62.01 «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-
25.62.01.02-3 «ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. օգոստոսի 10-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագծերի փորձաքննություն իրականացնող ոլորտային հանձնաժողովների անվանական կազմը հաստատելու մասին» N 777-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակայում» որակավորման պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2015թ. սեպտեմբերի 1-ից:

3. Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը. մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակայում» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին /Ն. Ղուկասյան/. ապահովել չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:

5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Հավելված
«ՀՀ կրթության և գիտության նախարարի
2014թ. 10. 17. N 1021-Ա/Ք
հրամանի

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ
5-25.62.01 «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
5-25.62.01.02-3 «ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԶԱՓՈՐՈՇԻՉ**

**ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն չափորոշիչը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 3-րդ մակարդակի 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝

- 1) առկա,
- 2) դրսեկության (էքստենսատ):

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

- 1) կրթության առկա ձևով՝
ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 1 տարի,

բ. հիմնական կրթության հիմքով առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի՝ 1 տարի,

գ. հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի,

2) դրսեկության (էքստեննատ) ձևով. կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի N 1028-Ն որոշման:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով և հիմնական կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագիրն ուսումնառող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1368 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2214 ժամ: Հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 5-25.62.01 «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-25.62.01.02-3 «ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿՎՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները.

1) Հանձնարարված գծագրերի, էսքիզների կամ տեխնոլոգիական փաստաթղթերի համաձայն մետաղական նյութերի եռակցում, կտրում ու մակահալում, մեքենամասերի, խողովակաշարերի եռակցում, կտրում ու մակահալում,

2) Էլեկտրատեղակցող՝ ձեռքով եռակցում:

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորմամբ մասնագետի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

1) նախապատրաստել աշխատատետղը,

2) ուսումնասիրել գծագրեր, էսքիզներ և տեխնոլոգիական փաստաթղթեր,

3) կատարել աշխատանքային գործիքների, նյութերի ընտրություն,

4) կատարել եռակցվող դետալի նախապատրաստում եռակցման կամ կտրման համար,

5) կատարել եռակցում, կտրում ու մակահալում,

6) կատարել եռակցված կարանի որակի ստուգում,

7) մետաղական մանրամասերի եռակցելը՝ օգտագործելով էլեկտրական աղեղ թերմիտային կամ այլ մեթոդներ,

8) մանրամասերի և հանգույցների աղեղային եռակցում կատարելը, եռկացման սարքավորումներ և մեքենաներ ղեկավարելն ու սպասարկելը,

9) սպասարկվող մեխանիզմները շահագործելը,

10) եռակցման և կտրման թերությունները բացահայտելը, վերացնելը և կանխելը,

11) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը,

12) այլ աշխատանքների կատարելը:

ԳԼՈՒԽ 3.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) 5-25.62.01 «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-25.62.01.02-3 «ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրաեռակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում է շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրաեռակցող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն ավարտած շրջանավարտը պետք է.

1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ունենա ազգային և համաշխարհային մշակույթի ու պատմության վերաբերյալ գիտելիքներ,

2) ունենա մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, կարողանա դրանք կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում,

3) մասնագիտական գործիքները, սարքավորումները, հարմարանքներն ու նյութերը արդյունավետ ու նպատակային օգտագործելու նպատակով կիրառի մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները,

4) ունենա մասնագիտական գործողությունները գործող նորմաների սահմաններում իրականացնելու հմտություններ,

5) ճիշտ ընկալի և կիրառի մասնագիտական տերմինաբանությունը,

6) ունենա մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,

7) ունենա մասնագիտական ինքնազարգացման և կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկություններն ընտրելու և մասնագիտական աղբյուրներից դրանք ձեռք բերելու հմտություն,

8) ցուցաբերի աշխատանքային խնդիրների լուծման ընթացքում պատասխանատվություն ստանձնելու,

հիմնավորված լուծումներ գտնելու կարողություն,

9) ունենա ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու հմտություն:

ԳԼՈՒԽ 4.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 5-25.62.01

«ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-25.62.01.02-3

«ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր ու հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) ցուցաբերի ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթների իմացություն,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն մեկ օտար լեզվով,

4) ցուցաբերի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին տիրապետելու կարողություն,

5) ցուցաբերի ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) տիրապետի էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությանը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթներին,

8) ցուցաբերի մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին ու ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով ներկայացված առանցքային հմտություններին:

13. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ներկայացված ընդհանուր մասնագիտական ու հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 5-25.62.01 «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-25.62.01.02-3 «ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության ու կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

2) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) Արտադրական ու նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման

հիմնական կրթական ծրագրի իրականացման ուսումնամեթոդական ապահովման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական ու տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեխնոլոգիա» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ. օտար լեզվի,

գ. հումանիտար առարկաների,

դ. եռակցման աշխատանքների տեխնոլոգիայի,

ե. ճարտարագիտական գրաֆիկայի,

զ. աշխատանքի անվտանգության,

է. համակարգչային,

ը. նյութագիտության,

թ. էլեկտրատեխնիկայի:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. եռակցման նյութերի:

3) Ուսումնական արհեստանոց՝

ա. եռակցման, կտրման ու մակահավման:

3) Սպորտային համալիր

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ:

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեխնոլոգիա» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են

հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ դրսեկության (էքստենսատ) ձևով ուսուցման դեպքում սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամ,

6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական ու նախաավարտական պրակտիկաներ.

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում ու հաստատում են ուսումնական հաստատությունները.

4) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում.

5) արտադրական ու նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգելու շրջանավարտի ձեռք բերած կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 5-25.62.01 «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 5-25.62.01.02-3 «ԷԼԵԿՏՐԱԵՌԱԿՑՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով հավելված 1-ի 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին ու հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին ու դրանց կատարման չափանիշներին համապատասխան, ուսումնական ծրագրերը մշակելիս, հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական,

գործնական ու լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների սույն ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է որակավորման նկարագրին համապատասխան դրա ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «էլեկտրատեղակցող» որակավորման պետական կրթական չափորոշի Աղյուսակ 1

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «էլեկտրատեղակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

1. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-14-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
7.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունն ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշներն օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:

8.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
9.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
10.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
11.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
12.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
13.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքներն ու տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:

14.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
15.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումներ (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքներն ու տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
2. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
16.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-3-14-001
17.	Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգներն ու վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:</p> <p>Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի եռակցման աշխատանքներ կատարելուց անվտանգության ապահովման կարողություններ՝ պահպանելով գործող նորմատիվները</p>
18.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում ու կենցաղում անվտանգության տեխնիկայի կանոնները
22.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները, դրանց իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,

		<p>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում էլեկտրատեղակայման սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները՝ ստուգելով հողանցումների և սարքավորումներին միացված մալուխների մեկուսացումները:</p> <p>4) ճիշտ է ներկայացնում եռակցման սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>7) ներկայացնում է անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
23.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
24.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրասագող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>2) ներկայացնում է աշխատատեղի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, թրթռումները, աղմուկը և այլն)</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերն ու դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,</p>
25.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգներն ու վթարները, իրականացնել անվտանգության տեխնիկայի պահանջներն ապահովող միջոցառումներ
26.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառներն ու հետևանքները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում եռակցման աշխատանքների ժամանակ հնարավոր վնասվածքների տեսակները՝ վնասվածքներ հոսանքահարումից, աղեղի ճառագայթումից, այրվածքներ հալված մետաղի և հեղուկ խարամի կաթիլներից, օրգանիզմի թունավորում եռակցման ժամանակ առաջացած գազերից,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում եռակցման ժամանակ հնարավոր վնասվածքներից խուսափելու միջոցառումները՝ անհատական պաշտպանական միջոցների օգտագործում (դիմակ, արտահագուստ և այլն) փակ տարածքներում բավարար օդափոխություն և այլն,</p>

		<p>4) ներկայացնում է արտադրական վթարների կանխման միջոցառումները,</p> <p>5) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, կանայք, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմաններն ու վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>6) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների հետաքննության ու փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
27.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
28.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու հիմնական կանոններին,</p> <p>2) առաջին օգնության ցուցաբերելու գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում,</p> <p>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
29.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-3-14-001
30.	Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը
31.	Մոդուլի տևողությունը	36 ժամ

32.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
33.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
34.	Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
35.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական, աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցներն ու տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), 4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերն ու հիմնավորում իր համապատասխանությունը, 5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
36.	Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
37.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, 2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունն ու տրամադրվածությունը, 3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, 4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն ու պատասխանատվության դրսևորումներ, 5) ցուցաբերում է գործընկերոջն ու ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
38.	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
39.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կազմակերպության նպատակներն ու դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, 2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքներն ու խնդիրների լուծման մեթոդները, 3) դրսևորում է հարգալից ու պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ,

		4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, 5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
40.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
41.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է աշխատանքային կարգապահության ու պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության ու վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
3. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
42.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-14-001
43.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
44.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
45.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
46.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
47.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում

48.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է համակարգչի հիմնական և դրա լրացուցիչ բաղադրիչներին,</p> <p>2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերի (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն) շահագործման աշխատանքներին,</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող համակարգչային հիմնական ծրագրերը (Microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակն ու ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային ցանկի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, ինչպես նաև դրանք պահպանում, բացում, փակում ու տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
49.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
50.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անհմացիաներ և այլն:</p>
51.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում ու խմբագրում
52.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերն ու նախապատրաստել դրանք,</p> <p>2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p> <p>3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն),</p> <p>4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:</p>

53.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում ու նկարազարդում
54.	Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով (Autoshapes) պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով ու չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
55.	Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
56.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերն ու դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ ու կատարում է պարզ գործողություններ , 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
57.	Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում:
58.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) բացատրում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»

մասնագիտության

5-25.62.01.02-3 «Էլեկտրաեռակցող» որակավորման հիմնական կրթական ծրագրերի ընդհանուր մասնագիտական և հատուկ

մասնագիտական կարողությունների մոդուլներ

1. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ»		
1.	Մոդուլի դասիչը	ԷԱՍ-3-14-001
2.	Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ մասնագիտական պարզ ու միջին բարդության եռակցման աշխատանքային գծագրերը և էսքիզները կարդալու և ներկայացնելու կարողություններ, պարզագույն դետալների էսքիզներ կատարելու, ինչպես նաև եռակցման միացությունների և կարանների տարբեր տեսակների գծագրերի վրա դրանց պայմանական նշանների կատարման անհրաժեշտ հմտություններ ու կիրառական գիտելիքներ
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Կարդալ աշխատանքային գծագրեր և էսքիզներ
7.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կարդում աշխատանքային գծագրերը և էսքիզները, 2) ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի վրա եռակցման կարանների տեսակներն ու պայմանական նշանները, 3) ճիշտ է կատարում չափադրումները:
8.	Ուսումնառության արդյունք 2	Կարդալ եռակցովի տիպային դետալների աշխատանքային գծագրեր և էսքիզներ
9.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կարդում տիպային դետալների աշխատանքային գծագրերը և էսքիզները,

		<p>2) եռակցովի տիպային դետալների վրա կարողանում է ճիշտ ներկայացնել եռակցման կարանների պայմանական նշանների պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացում աշխատանքային գծագրերի և էքքիզների վրա պատկերված եռակցովի դետալների թույլատրելի շեղումները,</p> <p>4) ճիշտ է բացատրում աշխատանքային գծագրերի և էքքիզների վրա ներկայացված տեխնիկական պայմաններն ու պահանջները</p> <p>5) ճիշտ է ներկայացում աշխատանքային գծագրերում և էքքիզներում նշված պայմանների համաձայն եռակցման աշխատանքների նախապատրաստման և իրականացման քայլերի հերթականությունն ու պայմանները:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել եռակցվող հանգույցի տիպային դետալների էքքիզներ
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում տիպային դետալների էքքիզները,</p> <p>2) եռակցովի տիպային դետալների վրա ճիշտ է ներկայացնում եռակցման կարանների պայմանական նշանների իմաստը,</p> <p>3) ճիշտ է բացատրում էքքիզների վրա պատկերված եռակցովի դետալների թույլատրելի շեղումներն ու դրանց նպատակը:</p>
2. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»		
12.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-002
13.	Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ սև ու գունավոր մետաղների, դրանց համաձուլվածքների, հատկությունների, դասակարգման, մակնիշավորման սկզբունքների և կիրառման բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև եռակցման համար անհրաժեշտ նախապատրաստվածքների պրոֆիլները տարբերակելու, մակնիշելու սկզբունքներն ու գործնականում օգտագործելու կարողություններ:</p> <p>Սովորողի մոտ ձևավորել եռակցվող դետալների մետաղի նյութըն ընտրելու, ջերմամշակման, բյուրեղացման ու վերաբյուրեղացման գործընթացի վերաբերյալ գիտելիքներ ու հասկացություններ</p>
14.	Մոդուլի տևողությունը	36 ժամ

15.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
16.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
17.	Ուսումնառության արդյունք 1	Տարբերել ու ճանաչել սև մետաղների՝ պողպատի ու թուջի դասակարգումը, կառուցվածքը, հիմնական ֆիզիկա-մեխանիկական հատկություններն ու կիրառման բնագավառները
18.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում երկաթ-ածխածնային համաձուլվածքների՝ պողպատի և թուջի սահմանումը, դասակարգումն ու կառուցվածքները, 2) ճիշտ է ներկայացում պողպատի և թուջի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները, 3) ֆիզիկա-մեխանիկական հատկություններից ելնելով՝ կարողանում է հիմնավորել դրանց կիրառման բնագավառները, 4) կարողանում է տարբերել թուջի և պողպատի նմուշներն ըստ կոտրվածքի:
19.	Ուսումնառության արդյունք 2	Ճանաչել թուջի և պողպատի մակնիշավորումը լեգիրող տարրերի նշանակումներով
20.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է վերծանում պողպատի մակնիշավորումը, 2) ճիշտ է վերծանում թուջերի մակնիշավորումը, 3) ճիշտ է ներկայացնում լեգիրվող պողպատների նշանակությունը, 4) ճիշտ է վերծանում լեգիրված պողպատների և թուջերի մակնիշները,
21.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել առավել հաճախ օգտագործվող գունավոր մետաղներն ու դրանց համաձուլվածքները, դրանց դասակարգումը, հատկությունները, կիրառման բնագավառն ու մակնիշավորումը
22.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հիմնական գունավոր մետաղները, դրանց համաձուլվածքներն ու դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում գունավոր մետաղների ու դրանց համաձուլվածքների ֆիզիկա-մեխանիկական հատկություններն ու կիրառության բնագավառները, 3) ճիշտ է ներկայացնում գունավոր մետաղների մակնիշավորումն ու ճիշտ է վերծանում այն:
23.	Ուսումնառության արդյունք 4	Թվարկել համաձուլվածքների ջերմամշակման տեսակներն ու կարողանալ կատարել ջերմամշակում

24.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում մետաղների և համաձուլվածքների բյուրեղացման ու վերաբյուրեղացման գործընթացներն ու դրանց տարբերությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ջերմամշակման տեսակներն ու դրանց ռեժիմները,</p> <p>3) կարողանում է կատարել եռակցման շինվածքների նախնական ու վերջնական ջերմամշակում, ապահովելով պահանջվող ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:</p>
25.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել եռակցման համար օգտագործվող պրոֆիլները, դրանց մակնիշներն ու կիրառման բնագավառները
26.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում եռակցման համար օգտագործվող գլոցվածք պրոֆիլները, դրանց դասակարգումը, մակնիշումն ու կիրառման բնագավառները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում եռակցման համար օգտագործվող մամլվածք պրոֆիլները, դրանց դասակարգումն ու կիրառման բնագավառները:</p>
3. ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
27.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-003
28.	Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների, հաստատուն ու փոփոխական հոսանքների շղթաների, էլեկտրաչափման սարքերի, չափման տեխնիկայի, հաղորդալարերի, մալուխների և էլեկտրամատակարարման վերաբերյալ: Արդյունքում ուսանողը ձեռք կբերի էլեկտրական հոսանքի շղթաների էլեկտրաչափման տեխնիկայի և էլեկտրատեխնիկայի սարքավորումը սնման աղբյուրին ճիշտ միացնելու և դրա անխափան ու անվտանգ էլեկտրամատակարարման ապահովման հմտություններ ու կարողություններ
29.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
30.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
31.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
32.	Ուսումնառության արդյունք 1	Օգտվելով հաստատուն հոսանքի շղթայից կատարել էլեկտրական չափումներ
33.	Կատարման չափանիշներ	<p>1) տարբերակում է հաջորդական ու զուգահեռ միացումները, կատարում է համապատասխան շղթաների հավաքում,</p> <p>2) ճիշտ է չափում հոսանքի ուժը, լարումն ու դիմադրությունը շղթայում ու դրա տարբեր տեղամասերում:</p>

34.	Ուսումնառության արդյունք 2	Օգտվելով փոփոխական հոսանքի միաժազ և եռաժազ շղթաներից կատարել էլեկտրական չափումներ
35.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է սահմանում միաժազ փոփոխական հոսանքն ու ներկայացնում դրա կիրառումը էլեկտրատեղակայման դեպքում,</p> <p>2) ճիշտ է սահմանում եռաժազ փոփոխական հոսանքն ու ներկայացնում դրա կիրառումը էլեկտրատեղակայման դեպքում,</p> <p>3) էլեկտրաչափիչ սարքերից օգտվելով՝ ճիշտ է չափում միաժազ և եռաժազ էլեկտրական հոսանքների շղթաներում հոսանքի ուժն ու լարումը:</p>
36.	Ուսումնառության արդյունք 3	Ճանաչել և իմանալ հաղորդալարերի ու մալուխների կառուցվածքը, ճիշտ ընտրել հաղորդալարերի և մալուխների հատույթի մակերեսը և երկարությունը՝ ապահովելով եռակցման տեղամասի անվտանգ ու հուսալի էլեկտրամատակարարումը
37.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է զանազանել էլեկտրամեկուսիչ նյութերը, հաղորդալարերն ու մալուխները,</p> <p>2) կարողանում է էլեկտրատեղակայման սարքավորումը ճիշտ միացնել սնման աղբյուրին՝ էլեկտրամատակարարման պահարանում, ապահովելով էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>3) կարողանում է եռակցման սպառիչի հզորությունից ելնելով ճիշտ ընտրել պահանջվող երկարությամբ ու հատույթով մալուխ՝ հուսալի և անվտանգ էլեկտրամատակարարում ապահովելու նպատակով:</p>
4. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱԱՂԵՂԱՅԻՆ ԵՌԱԿՑՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐՆ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ»		
38.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-004
39.	Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ մասնագիտական գիտելիքներ էլեկտրաաղեղային եռակցման էության ու դասակարգման, եռակցման համար օգտագործվող էլեկտրոդային լարերի, էլեկտրոդների, ֆյունների, պաշտպանիչ գազերի, եռակցողին անհրաժեշտ գործիքների ու պարագաների, ինչպես նաև դրանց անվտանգ ու նպատակային կիրառման կարգի վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի էլեկտրաաղեղային եռակցման նյութեր, գործիքներ ու պարագաներ ճանաչելու և գործնականում կիրառելու հմտություններ՝ պահպանելով անվտանգության կանոնները
40.	Մոդուլի տևողությունը	54 ժամ

41.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
42.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված Կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
43.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տեղեկություններ էլեկտրաաղեղային եռակցման համար օգտագործվող նյութերի, գործիքների և այլ պարագաների տեխնոլոգիական բնութագրերը, ինչպես նաև դրանց պահպանման և օգտագործման կարգը
44.	Կատարման չափանիշներ	<p>1) զանազանում ու ճիշտ է բնութագրում սև ու գունավոր մետաղների էլեկտրաաղեղային եռակցման համար օգտագործվող մետաղալարերի մակնիշներն ու հիմնական բնութագրերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հաստատուն ու փոփոխական հոսանքների դեպքում օգտագործվող ծածկույթով էլեկտրոդների մակնիշները, բնութագրերն ու կիրառման ոլորտը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ավտոմատ ու կիսավտոմատ եռակցման ժամանակ օգտագործվող ֆյուսների և պաշտպանիչ գազերի տեսակները, դրանց տեխնոլոգիական բնութագրերը, ինչպես նաև դրանց պահպանման և օգտագործման կարգը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում պաշտպանիչ գազերի՝ արգոնի, հելիումի, ածխաթթու գազի և դրանց խառնուրդների կիրառման պայմանները, գազի բալոնների գույներն ըստ գազի տեսակի,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում գազի բալոնների շահագործման անվտանգության կանոնները:</p>
45.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել էլեկտրոդաբռնիչների, պաշտպանիչ դիմակների, գործիքների և եռակցողի մյուս պարագաների անվտանգ օգտագործման կարգը
46.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում համապատասխան էլեկտրոդաբռնիչը՝ հաշվի առնելով նոմինալ հոսանքի ուժը,</p> <p>2) ճիշտ է ընտրում համապատասխան դիտապակիով պաշտպանիչ դիմակը՝ հաշվի առնելով նոմինալ հոսանքի ուժը,</p> <p>3) ճիշտ է ընտրում եռակցողին անհրաժեշտ գործիքները, պարագաները և արտահագուստը:</p>
47.	Ուսումնառության արդյունք 3	Օգտագործելով տարբեր էլեկտրոդներ՝ կարողանալ ստանալ կայուն էլեկտրական աղեղ ու բացատրել ծածկույթի ազդեցությունը աղեղի կայունության վրա
48.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է չհավվող ածխե էլեկտրոդով ստանալ կայուն էլեկտրական աղեղ ու ճիշտ է կատարում գործընթացը,</p> <p>2) կարողանում է համապատասխան էլեկտրոդով ստանալ հաստատուն հոսանքով էլեկտրական աղեղ ու ճիշտ է</p>

		կատարում գործընթացը, 3) ընտրելով փոփոխական հոսանքի էլեկտրոդը կարողանում է փոփոխական հոսանքով ստանալ կայուն էլեկտրական աղեղ ու ճիշտ է կատարում գործընթացը:
5. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՌԱԿՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԵՎ ԵՌԱԿՑՎՈՂ ՄԵՏԱՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ»		
49.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-005
50.	Մոդուլի նպատակը	Մոդուլի արդյունքում ուսանողը պետք է կարողանա նախապատրաստել էլեկտրատեղակայման աշխատատեղը, ճիշտ դասավորելով էլեկտրոդները, եռակցման համար անհրաժեշտ գործիքներն ու պարագաները, ընտրված արտահագուստը
51.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
52.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլին:
53.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
54.	Ուսումնառության արդյունք 1	Նախապատրաստվել էլեկտրատեղակայման աշխատանքներին:
55.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է օգտվում եռակցողի անհատական պաշտպանության միջոցներից՝ բրեզենտե արտահագուստ, ձեռնոցներ, կաշվե կամ թաղիքե բանվորական կոշիկներ, վահանակներ, պաշտպանիչ դիմակներ ու սաղավարտներ, 2) ճիշտ է դասավորում պահանջվող էլեկտրոդները, փականագործական գործիքները, պարագաներն ու անհրաժեշտ սարքավորումները:
56.	Ուսումնառության արդյունք 2	Մետաղը նախապատրաստել եռակցման ու կտրման համար
57.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մաքրում և ուղղում եռակցվող ու կտրվող մետաղը, 2) ճիշտ է չափում նախապատրաստվածքի գծային չափերը, անկյուններն ու շեղումները, 3) ճիշտ է կատարում առաջադրված փականագործական աշխատանքները՝ մետաղի շեղատումը, եզրահատումն ու կտրումը:

58.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել եռակցման շինվածքների հավաքման աշխատանքները
59.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում եռակցման համար հավաքման եղանակները, 2) ճիշտ է կատարում հավաքման աշխատանքների տեխնոլոգիական գործընթացները, 3) ճիշտ է օգտագործում հավաքման հարմարանքներն ու բացատրում դրանց դերը եռակցման ժամանակ, 4) ճիշտ է օգտագործում չափիչ-ստուգիչ գործիքները, 5) ճիշտ է կատարում կետակցումով շինվածքների հավաքումը եռակցման համար ու ստուգում հավաքման ճշտությունը՝ ներկայացնելով ճշտության շեղումները:
6. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱԱՂԵՂԱՅԻՆ ԵՌԱԿՑՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ»		
60.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-006
61.	Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրատեղակցման հիմնական սարքավորումների (գեներատորների, ուղղիչների, տրանսֆորմատորների ռեոստատների, օսցիլյատորների ավտոմատների և կիսաավտոմատների) տեսակների, կառուցվածքի, աշխատանքի սկզբունքի, տեխնիկական բնութագրերի, դրանց աշխատանքի նախապատրաստման անհրաժեշտ միջոցառումների և անվտանգ շահագործման վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի էլեկտրաաղեղային եռակցման նյութեր, գործիքներ ու պարագաներ ճանաչելու և գործնականում կիրառելու հմտություններ՝ պահպանելով անվտանգության կանոնները
62.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
63.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԷԱՏ-3-14-003 «Էլեկտրատեխնիկայի հիմունքներ» մոդուլին:
64.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
65.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաստատուն հոսանքի էլեկտրատեղակցման սարքավորումների տեսակները, կառուցվածքները, աշխատանքի սկզբունքը, տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև կարողանում է շահագործել ու սպասարկել սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

66.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է նախապատրաստում ու շահագործում էլեկտրատեղակայման միակետային գեներատորները,</p> <p>2) ճիշտ է նախապատրաստում ու շահագործում էլեկտրատեղակայման բազմակետային գեներատորները, օգտվելով յուրաքանչյուր կետի համար նախատեսված ռեսուստանտներից,</p> <p>3) ճիշտ է նախապատրաստում ու շահագործում էլեկտրատեղակայման ուղղիչ սարքավորումները,</p> <p>4) ճիշտ է օգտագործում հղկիչ շրջանակները:</p>
67.	Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել փոփոխական հոսանքի էլեկտրատեղակայման սարքավորումների տեսակները, կառուցվածքները, աշխատանքի սկզբունքը, տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև կարողանում է բացատրելով շահագործել ու սպասարկել սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
68.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է նախապատրաստում ու շահագործում էլեկտրատեղակայման միակետային տրանսֆորմատորները,</p> <p>2) ճիշտ է նախապատրաստում ու շահագործում էլեկտրատեղակայման բազմակետային տրանսֆորմատորները,</p> <p>3) ճիշտ է նախապատրաստում ու կարողանում է եռակցման շղթային միացնել օսցիլյատորն ու ստանում է էլեկտրական աղեղ,</p> <p>4) ճիշտ է բացատրում եռակցման սարքավորումների անջատման կարգն ու կարողանում է դա իրականացնել գործնականում՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
69.	Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել էլեկտրատեղակայման համար օգտագործվող ավտոմատների և կիսավտոմատների տեսակները, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, տեխնիկական բնութագրերն, ինչպես նաև կարողանում է շահագործել սարքավորումները</p>
70.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում ավտոմատ եռակցման համար օգտագործվող նյութերը՝ էլեկտրողալարերն ու ֆյուսները (հալանյութ, օքսիդալուծիչ),</p> <p>2) ճիշտ է բացատրում, նախապատրաստում ու շահագործում եռակցման ավտոմատը,</p> <p>3) ճիշտ է բացատրում էլեկտրաաղեղային եռակցման ժամանակ օգտագործվող պաշտպանիչ գազերի տեսակները, դրանց դերն ու գազաբալոնների անվտանգ շահագործման կանոնները,</p> <p>4) արգոնի և ածխաթթու գազի միջավայրում կարողանում է ստանալ աղեղ՝ ապահովելով անվտանգության կանոնները:</p>

7. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍԵՎ ՄԵՏԱԴՆԵՐԻ ԵՌԱԿՑՄԱՆ, ԿՏՐՄԱՆ ՈՒ ՄԱԿԱՀԱԼՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»

71.	Մոդուլի դասիչը	ԷԱՍ-3-14-007
72.	Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ գիտելիքներ էլեկտրաաղեղային եռակցման սարքավորումների նպատակային շահագործման միջոցով կայուն էլեկտրական աղեղ ստանալու վերաբերյալ: Ընտրելով եռակցման ռեժիմները կարողանալ ստանալ պահանջվող չափսերով կարեր՝ տարածական տարբեր դիրքերում: Այս մոդուլն ավարտելուց հետո ուսանողը կկարողանա եռակցել, կտրել ու մակահալել տարբեր բաղադրությամբ պողպատներ ու թուջեր
73.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
74.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԷԱՍ-3-14-001 «Ճարտարագիտական գրաֆիկա», ԷԱՍ-3-14-002 «Նյութագիտություն», ԷԱՍ-3-14-004 «Էլեկտրաաղեղային եռակցում, օգտագործվող նյութերն ու պարագաները», ԷԱՍ-3-14-005 «Եռակցման աշխատատեղի և եռակցվող մետաղի նախապատրաստումը», ԷԱՍ-3-14-006 «Էլեկտրաաղեղային եռակցման սարքավորումներն ու դրանց շահագործումը» մոդուլներին:
75.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
76.	Ուսումնառության արդյունք 1	Եռակցել միաշերտ ու բազմաշերտ կարեր
77.	Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում միաշերտ ու բազմաշերտ կարերի ստացման տեխնոլոգիական առանձնահատկություններն ու դրանց ընթացակարգը, 2) ճիշտ է ընտրում եռակցման սարքավորումները, գործիքները, նյութերը, պարագաներն ու նախապատրաստում է եռակցման տեղամասը՝ պահպանելով անվտանգության կանոնները, 3) ճիշտ է նախապատրաստում ու հավաքում եռակցվող ցածր ածխածնային պողպատից թիթեղները, 4) եռակցման պահանջվող ռեժիմներով ու տեխնիկայով ստանում է միաշերտ եռակցման կար, 5) ճիշտ է մաքրում ու ցուցադրում ստացված եռակցման կարը, 6) բազմաշերտ կար ստանալու առանձնահատկություններից ելնելով ճիշտ է ընտրում առաջին և հերթական շերտերի համար էլեկտրոդների տրամագծերը,

		<p>7) ճիշտ է ստանում բազմաշերտ կարը՝ նախօրոք մաքրելով նախորդ շերտի վրայի խարամը,</p> <p>8) աշխատանքն ավարտելուց հետո մաքրում է աշխատատեղն ու վերականգնում դրա նախնական վիճակը:</p>
78.	Ուսումնառության առդյունք 2	Եռակցել ստորին, հորիզոնական, ուղղաձիգ և առաստաղային կարեր
79.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում անհրաժեշտ նյութերն ու ստուգում դրանց քանակը,</p> <p>2) տարածական տարբեր դիրքերում ճիշտ է կատարում հավաքման աշխատանքները,</p> <p>3) ճիշտ է ստանում եռակցման կարերը տարածական տարբեր դիրքերում՝ ստորին, հորիզոնական, ուղղաձիգ և առաստաղային՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու կիրառելով անհրաժեշտ տեխնոլոգիական հնարքներն ու եռակցման ռեժիմները,</p> <p>4) ճիշտ է վերականգնում աշխատանքային տեղամասի նախնական վիճակը՝ գործող ընթացակարգի համաձայն:</p>
80.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել ածխածնային ու լեգիրված պողպատների եռակցում
81.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում մետաղների եռակցելիության հատկությունն ու դրա կախվածությունը մետաղի բաղադրությունից,</p> <p>2) ճիշտ է բացատրում պողպատների եռակցելիության վրա ազդող գործոնները՝ ածխածնի ու մյուս տարրերի պարունակությունն ու ջերմաֆիզիկական բնութագրերը,</p> <p>3) ճիշտ է բացատրում լեգիրված պողպատների դժվար եռակցելիության պատճառները,</p> <p>4) ճիշտ է ընտրում էլեկտրաաղեղային եռակցման տեսակը, եռակցման կատարման համար անհրաժեշտ սարքավորումները, նյութերը և եռակցման ռեժիմները՝ եռակցվող պողպատի մակնիշից կախված,</p> <p>5) ճիշտ է նախապատրաստում աշխատատեղը, սարքավորումները, նյութերը, գործիքները, եռակցման պարագաները, նախնական ու վերջնական տաքացման ջերմաստիճաններն ու կատարում է եռակցման աշխատանքը՝ միաժամանակ պահպանելով առաջադրված պողպատի համար նախատեսված տեխնոլոգիան, անվտանգության տեխնիկայի և հրդեհային անվտանգության կանոնները, ինչպես նաև բնապահպանական անհրաժեշտ միջոցառումները,</p> <p>6) մաքրում ու ցուցադրում է ստացված կարը, աշխատանքն ավարտելուց հետո մաքրում է աշխատատեղը վերականգնելով նախնական վիճակը:</p>

82.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել թուջերի եռակցում
83.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է դասակարգում թուջերն ու բացատրում դրանց եռակցման դժվարությունները,</p> <p>2) ճիշտ է բացատրում թուջերի էլեկտրաաղեղային եռակցման եղանակներն ու դրանց առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ընտրում թուջի տաք եռակցման համար անհրաժեշտ էլեկտրոդները, ֆյուսները, եռակցման ռեժիմները և առաջադրված տեխնոլոգիայի համաձայն իրականացնում է եռակցումը,</p> <p>4) ճիշտ է նախապատրաստում և ըստ առաջադրված տեխնոլոգիայի իրականացնում թուջի սառը էլեկտրաաղեղային եռակցումը՝ թուջե, պողպատյա և մոնել տեսակի էլեկտրոդներով,</p> <p>5) աշխատանքն ավարտելուց հետո մաքրում է աշխատատեղն ու վերականգնում դրա նախնական վիճակը:</p>
84.	Ուսումնառության արդյունք 5	Կատարել էլեկտրաաղեղային կտրում
85.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է նախապատրաստում աշխատանքային տեղամասը՝ ըստ առաջադրանքի ընտրելով համապատասխան էլեկտրոդները,</p> <p>2) ճիշտ է կտրում մետաղը չհավիղ գրաֆիտե էլեկտրոդով, օգտվելով հաստատուն հոսանքից,</p> <p>3) ճիշտ է կտրում մետաղը հաստ ծածկույթ ունեցող հավիղ էլեկտրոդով,</p> <p>4) ճիշտ է կտրում մետաղը օդա-աղեղային եղանակով,</p> <p>5) աշխատանքն ավարտելուց հետո մաքրում է աշխատատեղն ու վերականգնում դրա նախնական վիճակը:</p>
86.	Ուսումնառության արդյունք 6	Մակահալման գործընթացի իրականացում
87.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում մակահալման էությունը և եղանակները,</p> <p>2) ճիշտ է նախապատրաստում մշակվող դետալները մակահալման համար,</p> <p>3) ճիշտ է կատարում պարզ դետալների և գործիքների կարծր համաձուլվածքներով մակահալման գործընթացը,</p> <p>4) ճիշտ է կատարում վնասված խողովակների մակահալման գործընթացը,</p> <p>5) ճիշտ է կատարում թուջե և ալյումինե ձուլվածքների թերությունները վերացնելու գործընթացը մակահալմամբ:</p>
8. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՌԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»		
88.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-008

89.	Մոդուլի նպատակը	Ուսանողին տալ գիտելիքներ գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների էլեկտրաաղեղային եռակցման վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի գիտելիքներ ու գործնական հմտություններ պղնձի և այլումինի, ինչպես նաև դրանց համաձուլվածքների համար էլեկտրաեռակցման մեթոդի ընտրության և իրականացման բնագավառում
90.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
91.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԷԱՍ-3-14-001 «Ճարտարագիտական գրաֆիկա», ԷԱՍ-3-14-002 «Նյութագիտություն», ԷԱՍ-3-14-004 «Էլեկտրաաղեղային եռակցում, օգտագործվող նյութերն ու պարագաները», ԷԱՍ-3-14-005 «Եռակցման աշխատատեղի և եռակցվող մետաղի նախապատրաստումը», ԷԱՍ-3-14-006 «Էլեկտրաաղեղային եռակցման սարքավորումներն ու դրանց շահագործումը» մոդուլներին:
92.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
93.	Ուսումնառության արդյունք 1	Կատարել պղնձի և դրա համաձուլվածքների եռակցման աշխատանքներ
94.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում պղնձի ու դրա համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները և դրանց եռակցման դժվարություններն ու առանձնահատկությունները, 2) ճիշտ է նախապատրաստում եռակցման միացությունները, ընտրում ֆյուսները, լրացուցիչ պղնձի ձողը, տակդիրն ու գրաֆիտի էլեկտրոդը, 3) ճիշտ է կատարում պղնձի ու դրա համաձուլվածքների եռակցման գործընթացը գրաֆիտի էլեկտրոդով, 4) ճիշտ է կատարում պղնձի ու դրա համաձուլվածքների եռակցման գործընթացը հալվող էլեկտրոդով, 5) ճիշտ է կատարում պղնձի, արույրի ու բրոնզի եռակցման գործընթացը արգոնի միջավայրում:
95.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել այլումինի և դրա համաձուլվածքների եռակցման աշխատանքներ
96.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում այլումինի և դրա համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները և դրանց եռակցման դժվարություններն ու առանձնահատկությունները, 2) ճիշտ է նախապատրաստում եռակցման միացությունները, ընտրում ֆյուսները, լրացուցիչ ձողը, տակդիրը և եռակցման ռեժիմները,

		<p>3) ճիշտ է կատարում այլումինե թիթեղների եռակցումը ածխե էլեկտրոդով՝ առաջադրված տեխնոլոգիական գործընթացների համաձայն,</p> <p>4) եռակցելուց հետո, կարն ու դրան հարող մակերևույթը մաքրում է ֆլյուսից ու խարամից և լվանում է ջրով ,</p> <p>5) ճիշտ է կատարում այլումինի և դրա համաձուլվածքների եռակցման գործընթացը հալվող էլեկտրոդով,</p> <p>6) ճիշտ է կատարում այլումինի և դրա համաձուլվածքների արգոնաաղեղային եռակցման գործընթացը՝ ըստ առաջադրված տեխնոլոգիայի:</p>
<p>9. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՌԱԿՑՈՎԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԵՌԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»</p>		
97.	Մոդուլի դասիչը	ԷԱՍ-3-14-009
98.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է ուսանողին տալ գիտելիքներ և եռակցման կարողություններ արտադրությունում կիրառվող եռակցովի կոնստրուկցիաների և խողովակների եռակցման վերաբերյալ: Այս մոդուլն ավարտելուց հետո ուսանողը կարող է եռակցել շինարարական կոնստրուկցիաներ ու խողովակներ
99.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
100.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԷԱՍ-3-14-001 «Ճարտարագիտական գրաֆիկա», ԷԱՍ-3-14-002 «Նյութագիտություն», ԷԱՍ-3-14-004 «Էլեկտրաաղեղային եռակցում, օգտագործվող նյութերն ու պարագաները», ԷԱՍ-3-14-005 «Եռակցման աշխատատեղի և եռակցվող մետաղի նախապատրաստումը», ԷԱՍ-3-14-006 «Էլեկտրաաղեղային եռակցման սարքավորումներն ու դրանց շահագործումը», ԷԱՍ-3-14-007 «Սև մետաղների եռակցման, կտրման ու մակահալման տեխնոլոգիաներ», ԷԱՍ-3-14-008 «Գունավոր մետաղների եռակցման տեխնոլոգիա» մոդուլներին:
101.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
102.	Ուսումնառության արդյունք 1	Կատարել եռակցովի կոնստրուկցիաների պատրաստման գործընթացի նախապատրաստման աշխատանքները
103.	Կատարման չափանիշներ	1) անհրաժեշտ ճշտությամբ կատարում է պողպատյա գլոցվածքի և մամլվածքի ուղղումը, նշահարումները, կտրման ու հավաքման աշխատանքների համար,

		<p>2) ճիշտ է կատարում շաբլոնների նշանառումն ու պատրաստումը,</p> <p>3) ճիշտ է կատարում՝ շաբլոնի միջոցով, սերիական դետալների չափերի, առանցքների և անցքերի նշառումները,</p> <p>4) ճիշտ է կատարում պողպատյա մասերի կտրումը մկրատներով, սղոցնորով և այլ սարքավորումների միջոցով,</p> <p>5) ճիշտ է կատարում անցքաբացման ու կորածև մասերի ծռման աշխատանքները՝ սառը և տաք եղանակներով,</p> <p>6) կետակցումով հավաքում է կոնստրուկցիայի հանգույցները:</p>
104.	Ուսումնառության արդյունք 2	Եռակցել մետաղական մասերն ու կոնստրուկցիայի հանգույցները, կատարել արտադրանքի վերջնական հարդարում և որակի ստուգում
105.	Կատարման չափանիշներ	<p>1) հավաքված հանգույցի հիմնական չափերը ճշտելուց հետո կատարում է նախնական ու վերջնական եռակցում՝ առաջադրված տեխնոլոգիայի համաձայն,</p> <p>2) ճիշտ է կատարում պատրաստի արտադրանքի վերջնական հարդարումը,</p> <p>3) ճիշտ է կատարում պատրաստի արտադրանքի որակի ստուգումը՝ տրամադրված չափորոշիչների համաձայն,</p> <p>4) ճիշտ է կատարում պողպատյա մասերի կտրումը մկրատներով, սղոցնորով և այլ սարքավորումների միջոցով,</p> <p>5) աշխատանքը կատարում է անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
106.	Ուսումնառության արդյունք 3	Կատարում է խողովակների եռակցում
107.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է դասակարգում խողովակներն ու խողովակաշարերը (տաք ջրամատակարարման, շոգու և տեխնոլոգիական խողովակաշարեր ու գազատարեր,</p> <p>2) ճիշտ է մշակում խողովակի եզրերը եռակցման համար,</p> <p>3) ճիշտ է կատարում եռակցվող հանգույցի հավաքման գործընթացը,</p> <p>4) ճիշտ է կատարում նախնական ամրակցումը,</p> <p>5) ճիշտ է կատարում խողովակի էլեկտրաեռակցումը՝ տրված գծագրի և տեխնոլոգիայի համապատասխան,</p> <p>6) ճիշտ է ստուգում ստացված կարի որակը (դիտազննմամբ)՝ տրված չափորոշիչների համապատասխան:</p>
10. ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՌԱԿՑՄԱՆ ԿԱՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԱՐԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ»		
108.	Մոդուլի դասիչը	ԷԱՏ-3-14-010

109.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ եռակցման կարի որակի վերջնական արդյունքների գնահատման, թերությունների (նորմաներից շեղումների) հայտնաբերման, դասակարգման ու դրանց վերացման վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի գիտելիքներ ու կարողություններ եռակցման կարի արատների հայտնաբերման ու վերացման վերաբերյալ
110.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
111.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԷԱՏ-3-14-002 «Նյութագիտություն», ԷԱՏ-3-14-003 «Էլեկտրատեխնիկայի հիմունքներ», ԷԱՏ-3-14-004 «Էլեկտրաաղեղային եռակցում, օգտագործվող նյութերն ու պարագաները», ԷԱՏ-3-14-006 «Էլեկտրաաղեղային եռակցման սարքավորումներն ու դրանց շահագործումը» մոդուլներին:
112.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
113.	Ուսումնառության արդյունք 1	Դասակարգել եռակցման կարերի արատներն ու կանխարգելման միջոցները
114.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում եռակցման որակի հսկման խնդիրներն ու նշանակությունը կարի որակի ապահովման նպատակով, 2) ճիշտ է դասակարգում եռակցման կարի հնարավոր արատները, 3) տարբերակում է եռակցման կարի արտաքին արատներն ու բացատրում է առաջացման պատճառներն ու կանխարգելման միջոցները՝ եռակցման կարերի սխեմաների և նմուշների համապատասխան, 4) տարբերակում է եռակցման կարի ներքին արատներն ու բացատրում է առաջացման պատճառներն ու կանխարգելման միջոցները:
115.	Ուսումնառության արդյունք 2	Հայտնաբերել եռակցման կարերի արատները
116.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) արտաքին դիտազննմամբ կարողանում է ճիշտ հայտնաբերել եռակցման կարի արտաքին արատները՝ օգտագործելով եռակցման կարերը ստուգելու ձևանմուշներ, խոշորացույցներ և այլ տեխնիկական միջոցներ, 2) ճիշտ է բացատրում եռակցման ներքին արատների հայտնաբերման մեթոդները՝ մետաղագրաֆիկական հետազոտում, կարի մազնիսացում, մեխանիկական փորձարկում ռենտգենային լուսավորում, հերմետիկության

		ստուգում, գերձայնային ստուգում:
117.	Ուսումնառության արդյունք 3	Վերացնել եռակցման կարերի արատները
118.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է բացատրում եռակցման կարի արատների վերացման ձևերը՝ ըստ արատների տեսակների,</p> <p>2) ճիշտ է կատարում արատ ունեցող եռակցման կարերի մշակման գործողությունները,</p> <p>3) ճիշտ է լրացնում ոչ լրիվ լցված կարերը,</p> <p>4) կարողանում է լիարժեք վերացնել արտաքին ճաքերը:</p>

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 5-25.62.01 «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության 5-25.62.01.02-3 «Էլեկտրատեղակցող» որակավորման ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներևնողույններ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		27	18	1
3.	Իրավունքի հիմունքներ		54	36	1
4.	Պատմություն		54	36	1
5.	Օտար լեզու		90	60	1
6.	Ֆիզիկական կուլտուրա		58	58	1
7.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
8.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		472	334	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1.	Հաղորդակցություն		54	36	1
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		54	36	1
4.	Համակարգչային օպերատրություն		54	36	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		216	144	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Ճարտարագիտական գրաֆիկա		54	36	1
2.	Նյութագիտություն		54	36	1

3.	Էլեկտրատեխնիկայի հիմունքներ		54	36	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		162	108	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Էլեկտրաաղեղային եռակցում, օգտագործվող նյութերն ու պարագաները		81	54	1
2.	Եռակցման աշխատատեղի և եռակցվող մետաղի նախապատրաստումը		54	36	1
3.	Էլեկտրաաղեղային եռակցման սարքավորումներն ու դրանց շահագործումը		81	54	1
4.	Սև մետաղների եռակցման, կտրման ու մակահալման տեխնոլոգիաներ		108	72	1
5.	Գունավոր մետաղների եռակցման տեխնոլոգիա		54	36	1
6.	Եռակցովի կոնստրուկցիաների արտադրության ու խողովակների եռակցման տեխնոլոգիա		81	54	1
7.	Եռակցման կարի որակի ստուգում և արատների վերացում		54	36	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		513	342	
	ԸՆՏՐՈՎԻ		120	80	
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		54	36	
	ԸՆԴԱՄԵՆԸ	29	1537	1044	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ		100		
	ՊՐԱԿՏԻԿԱ	9			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	2			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	1			
	ԸՆԴԱՄԵՆԸ	41			